

# ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

**DEGHEGADOU**

**ديجيجادو**

Հասանելիությունը Գաղթյալի Հ.Բ.Ը.Մ.Ի

نشرة جمعية القادسية للترويج الأمتية العامة



ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌ Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

ԽԱՐԱԳԻՐ  
Արաքսի Տեօվլէթեան

ԳԵՂԱՐՈՒԷՍՏԱԿԱՆ  
ՁԵՒԱՐՈՐՈՒՄ  
ՇԱՀԷ ԼՈՒՍԱՐԱՐԵԱՆ

ՀԱՍՏԱԿԱՐԳՉԱՅԻՆ  
ՇԱՐՈՒԾՔ  
ԱՆԻ ՊՕՐՈՍԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ  
Nubar Printing House

Թի 24 Նոր Շրջան  
Յուլիս 2002

Տիար Տի րան Գէոր Էան ծանրաբեռնուած ըլլալով իր ուսումնասիրական աշխատանքներով, փափաք յայտնած էր ներկայ քիւն սկսեալ դադրիլ «Տեղեկատու»ի պատասխանատու խմբա թի իր հան ամանքէն: Այս առթիւ ՀԲԸՄ-ի Գահիրէի վարչութիւնը կը փափաքի Տիար Տի րան Գէոր Էանին շնորհակալութիւն յայտնել, իր տարած խղճամիտ եւ մասնա իտական աշխատանքին համար:

Ներկայ քիւն սկսեալ «Տեղեկատու»ի խմբա թի պաշտօնը ստանձնած է Տիկին Արաքսի Տեօվլէթեան: Ինչպէս ծանօթ է, Տիկին Արաքսի Տեօվլէթեան աւելի քան քառորդ դար լիատր հաղորդավարուիին եղած է ե իպտական ռատիոկայանի, երոպական բաժնի հայկական հաղորդումներուն:

Մեր յաջողութեան մաղթանքները Տիկին Արաքսի Տեօվլէթեանին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայաստան-Սփիւռք Բ. Խորհրդաժողովը	1
Հայաստան-Սփիւռք Երկրորդ Խորհրդաժողովի Հռչակա իր (Հատուածներ)	2
Հայաստան-Սփիւռք Խորհրդաժողովին Կողմէ Ընդունուած Ծրա իրներ	3
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարե ին Բ. Ունկնդրութիւն կը շնորիէ Ե իպտահայ Պատուիրակութեան	4
Ե իպտահայ Պատուիրակութեան Այցելութիւնը Հայաստանի Մօտ Ե իպտոսի Դեսպանին	4
ՀԲԸՄ-ի Բարերար Անդամուի Սաթեմիկ ճ. Չա ըրի Մահուան 20րդ Տարելիցը	5
Աթոն Եղոյեան Եւ Գաննի 55րդ Փառատօնին Արձա ան ւները	6
Քանդակա ործ Մար իս Թոսունեանի Անհատական Յուցահանդէսը	8
«Հայկական Բարե ործական Ընդհանուր Միութիւնը Խորհրդային Հայաստանում, 1923-1937թթ.» Հրաչ Մեփեքճեան	10
Տոքթ. Մոհամէտ Ռէֆա ʼաթ Էլ Իմամի Գիրքին Ներկայացումը	13
ՀԲԸՄ-ի Երոպայի 11րդ Մարզական Խաղերը	14
Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի Մարզիկներուն Մասնակցութիւնը Մոֆիայի Մէջ Կայացած ՀԲԸՄ-ի Երոպայի 11րդ Խաղերուն	14
Ընդունելութիւն ի Պատիւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի Յաղթական Մարզիկներուն	16
Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի Զերմէս Դաշտահանդէսը	16



# ՀԱՅԱՍՏԱՆ - ՄՓԻՒՔ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Մայիս 27-ին եւ 28-ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Հայաստան-Մփիւք համահայկական Բ. Խորհրդաժողովը, որուն իրենց մասնակցութիւնը բերին հայրենիքէն եւ սփիւռքէն 3000 հոգի:

27 Մայիսի առաւօտեան, խորհրդաժողովին պաշտօնական նիստին բացուցնելու կատարեց ՀՀի Արտաքին Գործոց Նախարար Վարդան Օսկանեան, որպէս Խորհրդաժողովը նախապատրաստող Յանձնաժողովի Նախագահ:

Ազգային օրհներգի եւ օրհնութեան արարողութիւնէն յետոյ խօսք առին ՀՀի Նախագահ Ռոբերտ Քոչարեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ., Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա., ԼՂՀ-ի Նախագահ Արկաղի Ղուկասեան, Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ Կաթողիկոս-Պատրիարք Ներսէս Պետրոս ԺԹ եւ Հայ Աւետարանական Եկեղեցոյ Համաշխարհային Խորհուրդի Նախագահ Վերապատուելի Վահան Թութիկեան:

Ապա, յաջորդաբար խօսք առին, հայ աւանդական երեք կուսակցութիւններու, «Հայաստան» համահայկական ընդհանուր Միութեան Կեդրոնական վարչական ժողովի, հայ Օգնութեան Միութեան, Ամերիկայի Հայկական Համագումարի Տնօրէններու Խորհուրդի, հայ Դատի Յանձնախումբի, Թէքեան Մշակութային Միութեան, Եւրոպայի հայկական Միութիւններու Ֆորումի եւ Եւրոմիութեան Հայ Դատի ներկայացուցիչները, թիով ընդամենը 19 հոգի:

Բացման նիստէն ետք Խորհրդաժողովին մասնակիցները այցելեցին Ծիծեռնակաբերդ եւ ծաղիկներ գետեղեցին Եղեռնի զոհերու յուշարձանին առջեւ:

Նոյն օրը, յետմիջօրէին Խորհրդաժողովին մասնակիցները հաւաքուեցան ՀՀ Կառավարութեան ընդունելութիւններու տան մէջ, շարունակելու Խորհրդաժողովին աշխատանքները զուգահեռաբար չորս տարբեր

սրահներու մէջ, մասնակցելով հետեւեալ չորս մասնագիտական քննարկումներուն:

1-Քաղաքական խնդիրներ, Հայաստան-Մփիւք յարաբերութիւններ:

2-Տեղեկատուութիւն եւ լրատուական միջոցներ:

3-Տնտեսութիւն եւ ընկերային-տնտեսական զարգացում:

4-Կրթութիւն, գիտութիւն եւ մշակոյթ:

Իւրաքանչիւր քննարկում ունէր մէկ ատենավար եւ երբեմն 4 կամ 5 գլխաւոր զեկուցողներ: Զեկույցներու աւարտին տեղի կ'ունենար ներկայ լսարանին մասնակցութեամբ ասուլիս:

Քննարկումի նիստերը շարունակուեցան նաեւ յաջորդ օրը՝ մինչեւ կէսօր:

Խորհրդաժողովին եզրափակիչ լիագումար նիստը սկսաւ 28 Մայիսին ժամը 15.15-ին:

Նախ՝ նիստերու ատենավարները ներկայացուցին իրենց վարած քննարկումներու արդիւնքները, որոնց մէջ արժածուած էին երկքաղաքացիութեան, լեզուական, մամուլի ազատութեան, արտագաղթի, տնտեսութեան, ներդրումներու եւ այլ խնդիրներ:

Ապա՝ ՄԱԿ-ի մօտ Հայաստանի դեսպան Մ. Աբելեան կարդաց Հայաստան-Մփիւք համահայկական Բ. Խորհրդաժողովի հռչակագիրը, որ ընդունուեցաւ ծափահարութիւններով: (Հռչակագիրէն հատուածներ կուտանք առանձին):

Նախագահ Ռոբերտ Քոչարեան շնորհակալական ելոյթով եւ անոր հետեւող Ամենայն Հայոց եւ Կիլիկիոյ կաթողիկոսներուն աղօթքով վերջ գտաւ Հայաստան-Մփիւք համահայկական Բ. Խորհրդաժողովը:



Հայաստան-Մփիւք Բ. խորհրդաժողովին մասնակցած եզրափակիչ պաշտօնական պատուիրակութեան անդամները

- Զախէն՝ աջ Տիար Պերճ Զալաճեան, Տիար Կարպիս Եագրճեան, Տոբթ. Սուրէն Պայրամեան, Տիկ. Սոնա Պայրամեան, Տիար Շահէն Մազլումեան, Տիար Պերճ Թէրզեան, Տոբթ. Արմէն Մազլումեան, Տիար Նուպար Սիմոնեան, Տոբթ. Էտի Գասապեան, Տիար Նորայր Տեօվլէթեան:



Նոյն օրը երեկոյեան, Սարգարայատի հերոսներուն յիշատակը յաւերժացնող յուշահամալիրին մէջ համերգ-տօնախմբութեամբ մը նշուեցաւ Հայաստանի Հանրապետութեան Հիմնադրութեան 84-ամեակը: Ներկայ էին ՀՀ-ի Նախագահը, Ամենայն Հայոց Հայրապետը, պետական Ասագանին, Խորհրդաժողովի պատգամաւորներն ու հոծ բազմութիւն մը:

Հայաստան-Սփիւռք համահայկական Բ. Խորհրդաժողովին եգիպտահայ գաղութի պաշտօնական պատուիրակութեան մաս կը կազմէին

**ԳԱՀԻՐԷՆ**

Գասապեան Էտի (Թեմական ժողով)  
 Եազըճեան Կարայիս (Հայ Ազգային Հիմնադրամ)  
 Թէրզեան Պերճ (ՀԲԸՄ)  
 Թէրզեան Տիկին Սեդա (Անհատ)

Մազլումեան Տոքթ. Արմէն (Անհատ)  
 Մազլումեան Շահէն (Թեմական ժողով)  
 Պայրամեան Տիկին Սոնա (Հայ Կարիքի Խաչ)  
 Պայրամեան Տոքթ. Սուրէն («Յուսաբեր»ի շրջանակ)  
 Տէօվլէթեան Նորայր («Արեւ»ի շրջանակ)

Սոյն կազմը կը գլխաւորէր Տիար Նուպար Սիմոնեան Գահիրէի Պատ. Զաղարական Ժողովի Ատենապետի իր հանգամանքով

**ԱՂԵՔՍԱՆԴԻԱՅԷՆ**

Հալաճեան Պերճ (Յառաջդիմասէր Ընկերակցութիւն)

Վերոյիշեալ պաշտօնական կազմէն զատ Խորհրդա-ժողովին անհատապէս մասնակցած են Զաքարեան Թովմաս եւ Ճանիկեան Օհան, երկուքն ալ Գահիրէէն:

**ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՓԻՒՌ ԵՐԿՐՈՐԴ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ՀՈՉԱԿԱԳԻՐ**

(ՀԱՏՈՒԱԾՆԵՐ)

ԵՐԵՒԱՆ, ՄԱՅԻՍ 27-28, 2002

Մենք՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԲՈՒՈՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐՍ, ԱՅՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՄԻԱՍՆԱԲԱՐ ՔՆՆԱՐԿԵՑԻՆՔ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՈՋԵՒ ԾԱՌԱՅԱԾ ՀԱՄԱՋԳԱՅԻՆ ԱՈՒԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱԲԷՐՆԵՐԸ ԵՒ ՆԱԽԱՆՇԵՑԻՆՔ ԶԱՆՈՆՔ ՀԱՄԱՏԵՂ ԶԱՆՔԵՐՈՎ ԼՈՒԹԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ:

ՆԵՐԿԱՅԻՍ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ, ՄԱՍՆԱՌՈՐԱԲԱՐ Ա Մ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԵՊՏԵՄԲԵՐ 11-Ի ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԻՐԱԳԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ՅԵՏՈՅ, ՏԵՂԻ Կ՝ՈՒՆԵՆԱՆ ՆՈՐ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ՈՒ ՋԱՐԳԱՅՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ՇՕՇԱՓԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՐՑԱԽԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՍՓԻՒՌԻ ԿԵՆՍԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ, ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՉԻ ԿՐՆԱՐ ԱՆՏԱՐԲԵՐ ՄԵԱՒ ԱՅՍ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱԲԷՐՆԵՐՈՒՆ:

ՄԵՆՔ ԲՈՒՈՐՍ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԿՐՈՂՆԵՐՆ ԵՆՔ, ՈՐՈՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՋԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ՈՒՄԵՐՈՒՆ ԴՐԱԾ Է ԾԱՆՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ:

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՈՒՈՐ ՀԱՅԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԸ Է» ԿԱՐԳԱԽՕՍՈՎ ՀԱՅ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԵԼՔԻՆ ԾԱՌԱՅԵԼԸ ՊԷՏԸ Է ԴԱՌՆԱՅ ԻՐԱՔԱՆՉԻՐ ՀԱՅՈՒ ԿԵՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՈՉՈՒՄԸ:

ՀԱՅԵՐԸ ՉԵՆ ԿՐՆԱՐ «ՕՏԱՐՆԵՐ» ԸԼԼԱՒ ԻՐԵՆՑ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԷՋ, ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՆԱԽԱՁԵՆԱԾ Է ՅԱՂԹԱՀԱՐԵԼ ԵՐԿԱՔԱՂԱՔԱՅԻՈՒԹԵԱՆ ԲԱՅԱՈՍԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԸ, ՀՆԱՐԱՌՈՐՈՒԹԻՒՆ ԸՆՁԵՈՒԵԼՈՎ ԻՐԱՔԱՆՉԻՐ ՀԱՅՈՒ ԼԻԱՐԺԷՔ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏԵԼ ԻՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԷՋ:

ՄԵՐ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՆՈՒԱՃՈՒՄՆ Է ԱՐՑԱԽԻ ԱՋԱՏԱԳՐՈՒՄԸ, ՈՐ ԴՐՍԵՒՈՐՈՒԹՅԱՒ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՍԱՍԱՆ ԿԱՄՔԸ ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԴԱՐԱՅԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՆ ԿԱՏԱՐՍԱՄԲ, ԵՒ ԱՆ ԴԱՐՉԱՒ ՀԱՄԱՋԳԱՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ, ՀԱՄԱԽՍԲՈՒՒՄՈՒԹԵԱՆ ՈՒ ՎՃՈՒԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԱՈՒ ՊԱՅՈՅՑ:

ԱՅՍՕՐ, ՄԵՆՔ ԿՐԿԻՆ ԱՆԳԱՄ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՆՔ ՄԵՐ ԱՄԲՈՂԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱՋԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԱՔԱՈՒՄՆԵՐՈՎ ԾՆԱԾ ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՋԱՏ ԱՊՐԵԼՈՒ ԵՒ ԻՆՔՆՈՐՈՇԵԼՈՒ ԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՒՆ ՆԿԱՏԱՄԲ:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԷ ԱՇԽԱՐՀԻ ԲՈՒՈՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԾԱՆԱՉՄԱՆԸ ՀԱՄՆԵԼՈՒ ԻՐ ՎՃՈՒԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ Կ՝ՈՂՋՈՒՆԷ ԱՇԽԱՐՀԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՐԿԱՐԱԽՈՂ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ ՏԱՐՈՒԱԾ ԲՈՒՈՐ ԱՅՆ ՃԻԳԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԱՊԱՅՈՒՑՅԱՆԵՆ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԻՆ ՆԿԱՏԱՄԲ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ ԱՃՈՂ ՅԱՆՉՆԱՈՒԹԻՒՆԸ:

ՄԷՋԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՆԱՐԱՐ ԱՐԺԷՔՆԵՐ ԵՆ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ, ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՓՈԽՇԱՀԱԲԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹԻՒՆԸ, ՄԱՐԴՈՒ ԵՒ ԱՋԳԵՐՈՒ ԱՋԱՏ ԱՊՐԵԼՈՒ ՈՒ ՋԱՐԳԱՆԱԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ, ԽԻՂՃԻ ԵՒ ԴԱՒԱՆԱՆՔԻ ԱՋԱՏՈՒԹԻՒՆԸ:

ՄԵՆՔ ՎՃՈՒԿԱՆՈՐԷՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՆՔ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆԸ, ՈՐՊԷՍ ՎՏԱՆԳԱՌՈՐ ՉԱՐԻՔ ՄԱՐԿԱՌՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:



## ՀԱՅԱՍՏԱՆ -ՍՓԻՒՔ Բ. ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ ԿՈՂՄԷ ԸՆԴՈՒՆՈՒԱԾ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Հայաստան-Սփիւք խորհրդատողովի օրերուն տեղի ունեցած քննարկումներուն ընթացքին, ընդունուած են եօթը ծրագիրներ: Ստորեւ այդ ծրագիրները իրենց լայն գիծերուն մէջ:

### 1- Համակար իջներու Հայթայթում Դըպրոցներուն

Այս ծրագիրին նպատակն է Հայաստանի 1500 եւ Լեռնային Ղարաբաղի 200 դպրոցները օժտել համակար իջներով որոնցմէ 300ը պիտի սկսին ործել մինչեւ 2003 թուականը, արդէն իսկ յուրօրին ունեցող միջոցներուն շնորհիւ, իսկ մնացեալը մինչեւ 2005 թուականը:

### 2- Ցեղասպանութեան Հետազօտական Կեդրոն

Հայաստանի մէջ հիմնել 1915-ի հայոց ցեղասպանութեան հետազօտական եւ հրատարակչական կեդրոն մը: Համակար էլ անցեալ 87 տարիներու ընթացքին կատարուած զանազան հետազօտութիւնները, ընդարձակել կատարուած աշխատանքը եւ այս ուղղութեամբ խրախուսել իտնականներու նոր սերունդը: Այս կեդրոնը կը զարանայ եւ կը լրացնէ իր անձնակազմը Հայաստանի եւ Սփիւքի համատեղ ջանքերով:

### 3- Հայա իտութեան Համացանցային Համալսարան

Այս ծրագիրը կը միտի հայա իտութեան համալսարանի մը կայքը գտնել համացանցին վրայ, որուն միջոցով հայա իտական նիւթերու մասին մասնաւորութիւններ կողմէ մշակուած ծրագիր մը, որպէս նմոյշ կը ծառայէ բարձրադաս ուսումնական հաստատութիւններու՝ եւ հայա իտական ուսումնասիրութիւններու համար:

### 4- Ուսումնական Ծրագիրներու Յանձնաժողով

Այս յանձնաժողովը պիտի մշակէ ծրագիր մը որ առիթ պիտի ընծայէ աշխարհացրիւ հայերուն որ տեղեակ ըլ-

լան իրենց անցեալին եւ ժառանգութեան:

Ան առիթ կ'ընծայէ նաեւ հայ կրթական մշակներուն, որ հանդիպին իրարու եւ քննարկեն հայոց լեզուն, մշակոյթը եւ պատմութիւնը դասաւանդելու զանազան մօտեցումները:

### 5- Օժանդակութիւն Ունակ Հայ Համալսարանականներուն

Հայաստանի զանազան համալսարաններու, Լեռնային Ղարաբաղի եւ Սփիւքի մէջ տնուող ուսանողներու ներկայ եւ ապա այն ցերեւոր օտարութիւնը նպատակով, կազմել ուսանողներէ եւ դասախօսներէ բաղկացած յանձնաժողով մը, որ ծրագիր մը մշակէ, կարող ուսանողներ տնելու եւ օժանդակելու անոնց իրենց ուսումը շարունակելու:

### 6- Բժշկական Տարածաշրջանային Կեդրոն

Երեւանի մէջ հիմնել համաշխարհային մակարդակի բժշկական կեդրոն մը, մէկտեղելով Հայաստանի, Արցախի եւ Սփիւքի մէջ տնուող բոլոր աղբիւրները:

Կեդրոնին նպատակը պիտի ըլլայ զարացնել եւ մատուցել բժշկական ծառայութիւններ ամենաարդիական սարքաւորումներով եւ թեքնիքով:

### 7- Սփիւքի Թանարան

Հայաստանի մէջ հիմնել Սփիւքին յատուկ թանարան մը, ի մի հաւաքելու համայնքներուն կեանքի եւ մշակոյթի զանազան ոլորտները արտացոլող արխիւային նիւթեր, վկայութիւններ, նկարա յութիւններ եւայլն:



## **Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՇՆՈՐՀԷ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ**

Հայաստան Սփիւռք Բ. խորհրդաժողովին մասնակից եգիպտահայ պատուիրակության անդամները, օգտուելով հայրենիք գտնուելու առիթէն, ունկնդրութիւն մը խնդրած էին Ամենայն Հայոց Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսէն:

Այդ փափաքը իրականացաւ, խորհրդաժողովին ասարտէն քանի մը օր յետոյ, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, հակառակ իր խիստ ծանրաբեռնուած ժամանակացոյցին, Ս. Էջմիածնի վեհարանին մէջ ունկնդրութիւն մը շնորհեց պատուիրակութեան, որ եգիպտահայոց Առաջնորդ Տ. Զաւէն Արք. Չինչինեանի գլխատրութեամբ ներկայացաւ վեհափառ հայրապետին:

Առաջնորդ Սրբազան Հայրը, խօսք առնելով յայտնեց թէ եգիպտահայ պատուիրակութիւնը կը փափաքի իր յարգանքի որդիական զգացումներուն հետ, իր շնորհակալութիւնը յայտնել վեհափառ հայրապետին, որ յատուկ կարգադրութեամբ եգիպտահայ թեմին մէջ հոգեւոր ծառայութեան համար

վերջերս դրկած է Ս. Էջմիածնի միաբաններէն Հոգ. Աշոտ վրդ. Մնացականեանը:

Պատուիրակութեան այլ անդամներ եւս խօսք առնելով, իրենց հաւատարմութիւնը եւ զօրավիգը յայտնեցին Ս.Էջմիածնին եւ անոր Գահակալին:

Ունկնդրութեան պաշտօնական բաժնին ասարտին պատուիրակութիւնը ստացաւ վեհափառ հայրապետին օրհնութիւնները եւ մաղթանքները: Ապա, հետաքրքրութեանը եւ ուշադրութեամբ վեհափառ հայրապետէն լսեց, հայրենիքի մէջ տեղի ունեցող հոգեւոր զարթօնքին եւ Ս. Էջմիածնի ճիգերով տարուած՝ նոր եկեղեցիներու շինութեան, հին եկեղեցիներու վերանորոգման եւ հոգեւորականներու պատրաստութեան աշխատանքներուն խրախուտիչ լուրերը:

Ունկնդրութեան ասարտին պատուիրակութեան անդամները իրենց շնորհակալութիւնները յայտնելով հրաժեշտ տուին վեհափառ հայրապետին:

## **ԵԳԻՊՏԱՀԱՅ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՕՏ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԵՍՊԱՆԻՆ**

Հայաստան Սփիւռք Բ. խորհրդաժողովի ասարտին յաջորդ օրը, եգիպտահայ պատուիրակութիւնը, համաձայն նախօրօք առնուած ժամադրութեան, քաղաքավարական այցելութիւն մը տուաւ Հայաստանի մօտ Եգիպտոսի դեսպան Ն.Գ. Ռուշտի Պաքրի էլ Ամմարիին:

Նորին գերազանցութիւնը պատուիրակութիւնը ընդունեց իր պաշտօնատեղիին մէջ, ուր ներկայ էր նաեւ դեսպանատան անձնակազմը:

Ան ջերմ խօսքերով արտայայտուեցաւ եգիպտահայ գաղութին մասին, նշելով անոր ունեցած դերը երկրին տնտեսական եւ մշակութային կեանքէն ներս: Ան նոյնպէս յիշեց, թէ Եգիպտոսի ժամանակակից պատմութեան մէջ առաջին վարչապետը եղած է հայազգի Նուպար Փաշան:

Դեսպանը նաեւ դրուատալից արտայայտութիւններ ունեցաւ Հայաստանի եւ հայ ժողո-

վորդին մասին եւ անդրադարձաւ այն ջերմ զգացումներուն՝ զոր ցոյց կուտայ հայրենի ժողովուրդը, հանդէպ Եգիպտոսի եւ ընդհանրապէս արաբներուն:

Պատուիրակութեան անդամները այս առթիւ նորին գերազանցութեան նուիրեցին «Հայկական Հարցը Օսմանեան Պետութեան Մէջ, 1878-1923» գիրքը (Հեղինակ Տոքթ. Մոհ. Ռէֆաաթ էլ Իմամ-Գահիրէ 2002):

Դեսպանը իր շնորհակալութիւնները յայտնեց այս գիրքին համար եւ կարեւորեց նման հեղինակութիւնները, որոնք լոյս կը սփռեն Հայկական Հարցին արմատներուն վրայ:

Այս հաճելի հանդիպումին ասարտին, պատուիրակութեան անդամները հրաժեշտ առին նորին գերազանցութենէն, փափաք յայտնելով կրկին հանդիպիլ իրեն Եգիպտոսի մէջ:



## ՀԲԸՄ-ի ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴԱՍՈՒՀԻ ՍԱԹԵՆԻԿ Դ. ՉԱԳԸՐԻ ՍԱՀՈՒԱՆ 20ԲԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Գահիրեի ՀԲԸՄ-ը մեծանուն Բարերարուհի Սաթենիկ Չագրրի մահուան յաջորդող անցեալ 19 տարիներում, իրաքանչիւր տարի՝ Մայիսին, խնդրած է որ հոգեհանգստեան պաշտօնը կատարուի, Գահիրեի Ս. Գիրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ, ի հանգիստ անոր հոգւոյն:

Այս տարի, բարերարուհիին մահուան տարելիցը յիշատակելու համար, յարմար դատուած էր, որ հոգեհանգստեան պաշտօնը կատարուի Աղեքսանդրիոյ մէջ, ուր ամփոփուած են բարերարուհիին աճիւնները, իր ընտանեկան դամբանին մէջ՝ Աղեքսանդրիոյ գերեզմանատան Ս. Գէորգ մատրան ներքեւ:

Տեղին է յիշել, թէ Հ.Բ.Ը.Մ.ի մեծանուն բարերարուհիին հօր մահուրէն յետոյ (1923), բարերարուհիին մայրը՝ Տիկին Արտեմ Թովալեան եւ զաւակները 1925-1927 տարիներուն շինած են Աղեքսանդրիոյ գերեզմանատան մատուռը, որ ի յիշատակ բարերարուհիին հօր՝ Գէորգ Թովալեանի, կոչուած է Ս. Գէորգ:

\*\*\*

Կիրակի 12 Մայիս 2002-ի առաւօտեան, Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցիին մէջ, յարար Ս. Պատարագի տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն ՀԲԸՄ-ի Բարերար անդամուհի բարեյիշատակ Սաթենիկ Դ. Չագրրի մահուան 20րդ տարելիցին առթիւ:

Օրուան պատարագիչն էր Աղեքսանդրիոյ հոգետր հովիի Ս. Գրիգոր Քինյ Օհանեան:

Հանդիսատր Ս. Պատարագին եւ հոգեհանգստեան պաշտօնին կը նախագահէր եգիպտահայոց բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Զաւէն Արք. Չինչինեան, որ այս յատուկ առիթով Գահիրէէն Աղեքսանդրիա ժամանած էր:

Եկեղեցական արարողութիւններուն ներկայ էին ՀԲԸՄ-ի եւ ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐԻ Գահիրեի եւ Աղեքսանդրիոյ վարչակազմերու անդամները, գլխաւորութեամբ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի եւ Գահիրեի Մասնաճիւղի ատենապետ՝ տիար Պերճ Թերգեանի, ՀԲԸՄ-ի Աղեքսանդրիոյ Մասնաճիւղի պատուոյ ատենապետ տիար Վահան Ալեքսանեանի, նոյն մասնաճիւղի ատենապետ՝ տիար Սարգիս Վարձպետեանի եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐԻ ատենապետ՝ տիար Կարայիս Թօսունեանի:

Նոյնպէս, ներկայ էին, Աղեքսանդրիոյ ազգային

իշխանութեան անդամներ, գլխաւորութեամբ Պատարժան Քաղաքական Ժողովի ատենապետ տիար Պերճ Փալանճեանի:

Դարձեալ, ներայ էին Տիգրան Երկաթ հայ Մշակութային Միութեան վարչական անդամներ գլխաւորութեամբ միութեան ատենապետ՝ տիար Մանուկ Գալիաքճեանի, ինչպէս նաեւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Ս. Պատարագին ներկայ էր նաեւ, սուրիահայ գրող եւ մտաւորական Տոքթ. Թորոս Թորանեան, որ հիւրաբար քաղաքս կը գտնուէր, Աղեքսանդրիոյ ազգային իշխանութեան հրաւերով, նախորդ օր իր տուած դասախօսութեան առիթով:

Չոյզ ծաղկեպսակներ դրկուած էին ՀԲԸՄ-ի եւ ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐԻ անունով:

Եկեղեցական արարողութիւններու աւարտին ներկաները բարձրացան ազգային առաջնորդարան, ուր տեղի ունեցաւ սուրճի սպասարկութիւն:

Ապա, ՀԲԸՄ-ի շրջանակը Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ ուղղուեցաւ Շաքայի ազգային գերեզմանատունը, ուր եւս Ս. Գէորգ մատրան մէջ տեղի ունեցաւ կարճ արարողութիւն մը, որուն հետեւեցաւ բարերարուհիին դամբանին օրհնութիւնը, որմէ յետոյ սրբազան հօր արտասանած հոգւոցով եւ հաւաքաբար երգուած տէրունական աղօթքով վերջ գտաւ արարողութիւնը:

\*\*\*

Գերեզմանատուն այցէն յետոյ Աղեքսանդրիոյ գեղեցիկ ակումբներէն մէկուն մէջ, տեղի ունեցաւ ՀԲԸՄ-ի շրջանակին կողմէ կազմակերպուած հոգեճաշ, որուն բացի ՀԲԸՄ-ի Գահիրեի եւ Աղեքսանդրիոյ պատասխանատուներէն ներկայ էին Առաջնորդ Սրբազան Հայրը, Աղեքսանդրիոյ հոգետր հովիւր, Աղեքսանդրիոյ Պատ. Քաղաքական Ժողովի ատենապետը, եւ սուրիահայ հիւր՝ Տոքթ. Թորոս Թորանեանը:

Հոգեճաշի ընթացքին խօսք առաւ Տիար Պերճ Թերգեան շեշտելով բարերարութիւններուն կարեւորութիւնը մեր ազգային կեանքին մէջ, վեր առնելով բարերարուհի Սաթենիկ Չագրրի նուիրատութեան ունեցած կարեւոր դերը, եգիպտահայ գաղութի անցեալի այլ մեծ բարերարներու կողքին:

Հոգեճաշը աւարտեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր աղօթքով:



## ԱԹՈՄ ԵՂՈՅԵԱՆ ԵՒ ԳԱՆՆԻ 55ՐԴ ՓԱՌԱՏՕՆԻՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ

Աթոմ Եղոյեանի «Արարատ» ժապաւէնը, ենթախորագրուած «Իրական Պատմութիւն Մը Ապրող Ապացոյցի Մասին», հակառակ թրքական լրատու գործակալութիւններու եւ այլ կազմակերպութիւններու յարուցած բազմապիսի խոչընդոտներուն, հասաւ Գաննի 55րդ փառատօնին, եւ ցուցադրուեցաւ մրցանքէ դուրս, 20 Մայիս 2002-ին:

Համաձայն լրատու գործակալութիւններու հրապարակումներուն, Աթոմ Եղոյեան, չէ ընդառաջած փառատօնի կազմակերպիչներուն եւ ժապաւէնին արտադրիչին խնդրանքներուն ու հաստատ մնացած է ժապաւէնը մրցանքէ դուրս ներկայացնելու իր որոշումին վրայ, որովհետեւ ըսած է ան, ժապաւէնը խորապէս անձնական է, եւ ինք կը նախընտրէ որ միջազգային հանդիսատեսը իր ուշադրութիւնը կեդրոնացնէ ժապաւէնին՝ եւ ոչ թէ մրցանքին վրայ:

«Արարատ»ի ցուցադրութենէն ամիսներ առաջ, միջազգային մամուլը անդրադարձաւ անոր նիւթին, մանաւանդ երբ ժապաւէնին տրուեցաւ «Ֆիլմ 1915-ին Օսմանեան պետութեան կողմէ իրագործուած հայկական ցեղասպանութեան մասին» պիտակը, որուն անմիջապէս յաջորդեց թրքական զօրաւոր հակաքարոզչութիւն մը:

Լրատու գործակալութիւններու թղթակիցները հարցումներու հեղեղի մը ենթարկեցին «Արարատ»ի բեմադրիչը, դերասանները եւ արտադրիչները, ժապաւէնին ցուցադրութենէն առաջ եւ վերջ:

Տեսնենք թէ «Արարատ»ի բեմադրիչը զանազան թղթակիցներու հարցումներուն պատասխանելով ի՞նչպէս կը բնութագրէ իր ստեղծագործութիւնը:

Սկիզբէն -կ'ըսէ Եղոյեան- նպատակս էր պատրաստել շարժապատկեր մը, որ մասնակիօրէն պիտի պատմէր թէ ես ո՞վ էի 18 տարեկանիս: Ինձի համար անհրաժեշտ էր գտնել ձեւ մը, արտայայտելու այն զգացումները, որոնց հետ

պէտք էի հաշուի մտնիլ, կեանքի իմ այդ շրջանիս:

«Մենք որպէս ընկերութիւն, կառչած ենք միասնական յիշողութեան մը: Պատմութիւնը ասանդելը ծնողներու կողմէ իրենց զաւակներուն եւ այդ զաւակներուն կողմէ անոր փոխանցումը իրենց յաջորդներուն, կարելոր է մեր ինքնութեան հաստատումին համար»:

«Արարատ»ը ժապաւէն մը չէ որ որեւէ ձեւով կ'ուզէ ճիւղի պատկերը տալ այսօրուան թուրքին: Իրականութեան մէջ ան բոլորովին հակառակն է:

Ինչ որ ես կ'ուզեմ ընել, այն է, խնդրել հանդիսատեսէն որ նկատի առնէ թէ ի՞նչ կը նշանակէ դատումներ կատարել մէկու մը մասին, որ ողջ է այսօր, իբր հետեւանք լաւ կամ գէշ արարքներու՝ կատարուած մարդոց կողմէ, որոնք այսօր ներկայ չեն»:

Եւ վերջապէս, Եղոյեան կը յարէ. «Ես ուզեցի արտադրել միջազգային հասարակութեան ուղղուած ժապաւէն մը, որպէսզի ոեւէ մէկը կարենայ դիտել զայն: Ստեղծագործութիւնը միջոց մըն է սպիացնելու վերքը եւ շարունակելու կեանքը: Ապրելու համար պէտք է ասանդել պատմութիւնը:

Շարլ Ազնաւուր որ ժապաւէնին կարելոր դերերէն մէկը ստանձնած է, շատ կարելոր կը գրտնէ «Արարատ» ժապաւէնին նիւթը, արտադրութիւնը ու ներկայացումը:

Ան թղթակիցներուն կ'ըսէ թէ «Արարատ»ին մէջ իւրաքանչիւր տեսարան ինձի կը յիշեցնէ բան մը, որուն մասին մայրս պատմած էր»: Ան կը փափաքի որ շարժապատկերը ունենայ այնքան տարածում որքան կարելի է, որպէսզի «անցեալի այս պատահարները բնաւ երբեք չքօղարկուին ու չկեղծուին դարձեալ: «Արարատ»ը կարելոր է յատկապէս երիտասարդ թուրքերուն՝ հասկնալու համար, թէ ի՞նչ պատահած էր, որպէսզի այլեւս չազդուին Թուրքիոյ մէջ հրատարակուած պատմութեան գիրքերէն»:





20 Մայիսի երեկոյեան «Արարատ» ժապաւէնի ցուցադրութեան ընթացքին, երկու վայրկեան տեւող իրական եւ անմարդկային արարքներու տեսարանները, ընդվզեցուցած են կարգ մը հանդիսատեսներ, որոնք լքած են դահլիճը: Մակայն, ցուցադրութեան ասարտին, ներկայ դահլիճը 10 վայրկեան յոտընկայս ծափահարած է հեղինակ Աթոմ Եղոյեանը եւ իր ստեղծագործութիւնը:

25 Մայիսին մամուլը լայնօրէն արձագանգած է շարժապատկերին մասին: Թրքական գնահատականները ընդհանրապէս ժխտական եղած են, բայց ուզած են, որ ան ցուցադրուի Թուրքիոյ մէջ եւս: Համաձայն կարգ մը թուրք թղթակիցներու, Եղոյեան չէ արդարացուցած բարձրորակ արուեստի անշահախնդիր այն մօտեցումը, որ կ'ակնկալուէր իրմէ:

Պոլսահայ «Ալօս» թերթի խմբագիր Հրանդ Տինք, ժապաւէնին մասին անդրադառնալով ըսած է, «ան օգուտ չի բերեր թուրք - հայ յարաբերութիւններուն»:

Հետաքրքրական են միջազգային մամուլին արձագանգները, որոնք ընդհանրապէս լուսարձակի տակ կ'առնեն ժապաւէնին նիւթը:

Ստորեւ անոնցմէ մի քանին:

«Արարատ»ը ցեղասպանութեան մասին նկարահանուած ժապաւէն մը չէ. ան չմիտիւր թափանցել Օսմանեան կայսրութեան քաղաքական փառասիրութիւններուն իրագործումին համար գործադրուած ցեղասպանութեան, այլ կը միտի ներկայացնելու անոր թողած ազդեցութիւնը, արդի սերունդին նկարագիրին վրայ»:

Այլ քննադատ մը կը գրէ. «Արարատ»ը, խումբ մը ժամանակակից մարդոց համար, մեծ իրողութեան մը ու անոր նշանակութեան մէկ փոքր, անձնական պատմութիւնն է: Ան ատելի մտերմիկ հայեացք մըն է այնպիսի դիւցազներգական իսկութեան մը, տրուած այնպիսի ճշգրտութեամբ, որ չէի ակնկալէր: «Արարատ»ը յաջողած է, որովհետեւ Աթոմ Եղոյեանի կիզակէտը «իսկական» մարդիկ են իրենց իսկական զգացումներով»:

«Արարատ»ը նպատակադրուած է ընկալուելու զանազան խաւերու կողմէ: Ան թատերականացուած պատմական գործ մըն է, քննարկում մը, թէ ի՞նչպէս արուեստը կրնայ ցոլացնել անցեալի ողբերգութիւններէն ազդուած անձնական յարաբերութիւնները»:

Անցեալի քարացած սուտերը, խաբէութիւնը, ուրացումը, իրողութիւնն ու վախերը որոնց մասին Եղոյեան կը խօսի, կը ներկայացուին միայն առիթներով. հանդիսատեսին ձգելով պատկերացնել թէ պատատառին վրայ ցուցադրումէն անդին ի՞նչ պատահած էր:

«Արարատ»ը ժապաւէն մըն է, որ պէտք է դիտել, որովհետեւ հոն արծարծուած նիւթը դրժբախտաբար կը կիրակուի նաեւ այսօր, ինչպէս Ռուանտայի եւ Պալքանեան երկիրներու վերջին ողբերգութիւնները. Յեղասպանութիւնը անցեալի ոճիր մը չէ միայն:

Աթոմի հայրը, Ժոզէֆ Եղոյեան, պատասխանելով թղթակիցներուն կ'ըսէ: «Կը յուսամ, որ զաւակս հայկական ցեղասպանութիւնը միջազգային հաւաքականութիւններու ուշադրութեան յանձնելով ոչ միայն կ'օգնէ հայերու մէջ խորացած պալարին սպիացման գործընթացքին, այլ նաեւ կը ծառայէ որպէս դաս աշխարհի ժողովուրդներուն, դադրեցնելու սպանութիւնները»:

«Արարատ»ը միջազգային շուկայ կ'իջնէ Նոյեմբեր 2002-ին, «Միրամաքս» եւ «Տիզնի» ընկերութիւններուն միջոցաւ, որոնք կը յուսան շարժապատկերը տեսնել «Ակադեմական Մրցանակ»ի արժանի:

Իսկ մենք կը յուսանք առիթը ունենալ «Արարատ»ը Եգիպտոսի մէջ դիտելու մօտ ապագային:

Մինչ այդ, կը շնորհաւորենք Աթոմը շարժապատկերի աշխարհին մէջ ունեցած իր յաջողութիւններուն համար եւ մանաւանդ այն իրողութեան համար որ հակառակ իր երիտասարդ տարիքին, գիտցաւ չմոլորիլ իր նուաճած բարձր դիրքէն, այլ գիտցաւ իր հետ բարձրացնել նաեւ իր ազգն ու արդի աշխարհը յուզող հարցեր:



## ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՍԱՐԳԻՍ ԹՈՍՈՒՆԵԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

Կարելի է ըսել, որ անկասկած այս տարի եզրիպատահայ մշակոյթի պատմութեան ամենակարեւոր իրադարձութիւնը եղաւ՝ Աղեքսանդր-խաբնակ տաղանդաւոր քանդակագործ Սարգիս Թոսունեանի իններորդ անհատական ցուցահանդէսը:

Արուեստագէտը, Գահիրէի Չամալէք թղամասի արուեստներու համալիրի Էխնաթոն թիւ 4 ցուցասրահին մէջ, անցեալ Յունիսի 6-23ի ընթացքին, ներկայացուցած էր ծանր ու յարատեւ աշխատանքով ստեղծագործուած 45 նրբագեղ գործեր: Բոլորն ալ «սենեկային» միջին ծաւալի գործեր՝ տոգորուած մարդասիրութեամբ, առարկայականութեամբ ու լաւատեսութեամբ:

Թոսունեան արդի իրապաշտութեան հետեւող մըն է: Բնաւ չդիմելով փորձառական կամ դիտողը «ցնցող» տարօրինակ ու արտառոց հնարներու՝ կանգնած է դասականութեան պատուանդանին: Անոր գործերը մեզ կը տպաւորեն ու կը հրապուրեն իրենց անմիջականութեամբ, նիւթի նրբակերտ մշակմամբ ու կառուցուածային համաչափութիւններու ներդաշնակութեամբ, յատկութիւններ՝ որոնք կը «շոյեն»

դիտողին աչքն ու հոգին, անոր պատճառելով գեղագիտական մեծ հաճոյք:

Արուեստագէտը «գեղեցիկ»ը պաշտող մըն է, նաեւ հեռու է սուր քննադատական թեմաներ ներկայացնելէ, որովհետեւ իր գլխաւոր նպատակն է գեղագիտական հաճոյք պատճառել մարդոց՝ անշուշտ զանց չառնելով մարդասիրական գաղափարներով յագեցած թեմաներու մշակումը:

Ցուցահանդէսին մէջ ներկայացուած էին քանի մը քանդակաշարեր, նաեւ քանի մը եզակի գործեր: Քանդակաշարերէն էին իշխան-իշխանուհիներու շարքը, նաեւ մարդուն՝ կեանքի ու ժամանակի պարտադրած «կապանքներու» շարքը: Կային նաեւ ստեղծագործութիւններ որոնք կը փառաբանէին կանացի եւ ընդհանրապէս մարդկային ֆիզիքական ու հոգեկան գեղեցկութիւնը: Ուրիշ շարք մը կը ներկայացնէր ռազմիկներ՝ որոնք քաջարի ու հպարտ են, այնուամենայնիւ կաշկանդուած են պարտաւորութիւններու ու պարտականութիւններու կապանքներով:



Իշխան



Կար նաեւ ուշագրաւ քանդակաշար մը, որ կը ներկայացնէր մարդը որպէս իմաստուն ու մտածող:

«Եզակի» գործերէն պէտք է յիշել «Մարմնամարզիկը», «Քամիին դիմաց», «Ճնշուած ցանկութիւն» եւ «Cloning» ստեղծագործութիւնները: Այս գործերէն իրաքանչիւրը ինքնին գեղարւեստական լուրջ նուաճում մը կարելի է համարել:

Բացի երկու թրծակաւ (terra cotta) կտորներէ, Թոսունեանի ցուցադրած արձանները բոլորն ալ պրոնզէ (35 գործ), ալյումինիումէ (8 գործ) ձուլածոներ էին:

Արուեստագէտը վարպետօրէն մշակած է իր ստեղծագործութիւններու ծաւալային մակերեսները, ստեղծելով սուր հակադրութիւններ, մէկ կողմէ ողորկ ու փայլուն, իսկ միւս կողմէ կոշտ ու անփայլ մակերեսներու միջեւ: Այս «կոշտ» մակերեսները պահպանած են անոր մատնահետքերու «դրոշմը», որ գոյացած է կաւի միջոցաւ արձանի կերպարուման (modelling) սկզբնական շրջանին:

Վերոյիշեալ մշակման հակադրութիւններուն հաւասարակշռութիւնն է, որ յատուկ հմայք մը կը հաղորդէ Թոսունեանի գործերուն:

Մեր այս յօդուածին աւարտին պիտի նշենք, որ եզիպտահայութիւնը ունեցած է բազմաթիւ տաղանդաւոր գեղանկարիչներ, սակայն միայն մէկ տաղանդաւոր քանդակագործ՝ Տարիա Կամսարականը: Ճիշդ է, Կամսարականէն առաջ եւ վերջ ունեցած ենք քանի մը «երկրորդական» քանդակագործներ, ունեցած ենք նաեւ բազմատաղանդ արուեստագէտ Օննիկ Աւետիսեանը, որ շրջան մը զբաղուելով քանդակագործութեամբ արտադրած է փոքրաթիւ արժէքաւոր գործեր: Սակայն Թոսունեանի պարագան բոլորովին ուրիշ է: (Տարիա Կամսարականի նման) ամբողջութեամբ նուիրուելով այս դժուարաստեղծ արուեստին եւ յարատեւօրէն մշակելով իր տաղանդն ու թեքնիքը, իրապէս իր արուեստին մէջ այսօր հասած է բարձրակէտի մը, որմով ոչ միայն համայն հայութիւնը, այլեւ համայն Եզիպտոսը կրնայ հպարտանալ:

Հրանդ Բէշիշեան



Ժամանակի Կապակները



Քամիին Դիմաց



# «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, 1923 - 1937 ԹԹ.»

Հեղինակ՝ Էդուարդ Լ. Մելքոնեան

Հայաստանի Գիտություններու Ազգային Ակադեմիայի Պատմության Ինստիտուտին կողմէ, 1999-ին, Երևանի մէջ լոյս տեսած է պատմաբան Էդուարդ Մելքոնեանի փաստագրական ուսումնասիրութիւնը Հ.Բ.Ը.Մ.-ի 1920-30-ական թուականներու գործունէութեան մասին՝ Խորհրդային Հայաստանի մէջ: Գիրքը կը բաղկանայ 202 էջերէ եւ հրատարակուած է «XXI Դար» անկախ միջազգային ասոցիացիայի նախագահ, քաղաքական գիտություններու դոկտոր Արկաղի Վարդանեանի (Մոսկուա) մեկենասութեամբ, «Նոյեան Տապան» լրատուական կեդրոնի տպարանին մէջ, Երևան:

Գիրքը ունի հետեւեալ բաժանումները. երկու խօսք, ներածութիւն, Հայաստանեան ծրագրեր, 1920-30 թթ. ներգաղթը, Հ.Բ.Ը.Միութիւնը Հայաստանի ներքաղաքական պայքարում, վերջաբան, ծանօթագրութիւններ եւ անձնանուններու ցանկ: Գիրքին մէջ զետեղուած են նաեւ քիչ թիւով արխիւային լուսանկարներ:

Հեղինակը «երկու խօսք»ին մէջ ծանօթացնելով Հ.Բ.Ը.Մ.-ի գործունէութեան դաշտը կը շեշտէ անոր համասփիւռքեան կառոյց մը ըլլալու մեծ դերը: Իսկ անոր շուրջ 15-ամեայ գործունէութիւնը Խորհրդային Հայաստանի մէջ՝ 1923-էն 1937 «մինչ այժմ մնում է գրեթէ անյայտ»: Եւ ա՛յս շատ կարեւոր, հետաքրքրական եւ ուսանելի շրջանին մասին է որ կ'անդրադառնայ Մելքոնեան այս գիրքին մէջ: Ան պրպտած, ուսումնասիրած եւ հանրութեան սեփականութիւնը դարձուցած է այնպիսի վաւերագրական էջեր, նամակներ ու որոշումներ, որոնք արխիւներու դարակներէն լոյսին գալով ցոյց կու տան մէկ կողմէն Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավարութեան անշահախնդիր ու հայրենաշինական մօտեցումները, իսկ միւս կողմէն Խորհրդային վարչակարգին փտած եւ հիւանդագին քաղաքականութիւնը: Արդարեւ, Հ.Բ.Ը.Մ.-ի եւ հայաստանեան արխիւային, մինչ օրս չհրատարակուած, նիւթերը խոր ցաւ արթնցնելով հանդերձ, ցոյց կու տան սփիւռքի «պուրժուա» մեծահարուստ հայրենակիցներուն անսակարկ նուիրումները իրենց ժողովուրդին եւ հայրենիքին:

Ներածութեան մէջ Մելքոնեան կը խօսի Հ.Բ.Ը.Մ.-ի հիմնադրութեան եւ անոր հիմնադիրներուն մասին՝ Պօղոս Նուպար փաշա, Եագուպ Արթին փաշա, Երուանդ Աղաթօն պէյ եւ միւսները, միշտ յենելով վաւերագիրներու վրայ: Կ'անդրադառնայ Ա. Համաշխարհային պատերազմի աւերիչ դերին, Մեծ Եղեռնին, որբահաւաքի եւ այլ աշխատանքներու: Բաւական մանրամասն տեղեկութիւններ տալով հիմնադիրներուն մասին, հեղինակը ցոյց կու տայ անոնց հայրենասիրութեան չափանիշը:



Էջ 23-էն 68 կ'երկարի «Հայաստանեան ծրագրեր» բաժինը: Թէ ինչպէ՞ս եւ ե՞րբ սկսաւ Հ.Բ.Ը.Մ.-ը իր բարեսիրական ծրագիրները տարածել նաեւ Խորհրդային Հայաստանի մէջ, այդ մասին կը կարդանք հետեւեալը.

«1921 թ. Օգոստոսի 30-ին Հ.Բ.Ը.Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը հրատարակեց «Հ.Բ.Ը.Միութիւնը Հայաստանի մէջ» յատուկ յայտարարութիւն: «Կեդր. Վարչ. Ժողովս, յառաջ երթալով պաշտօնական եւ այլ շրջանակներէ իրեն ուղղուած կոչերուն,- ասուում էր յայտարարութեան մէջ,- օգնութիւն կազմակերպելու համար Հայկ. Հանրապետութեան սահմաններուն մէջ եւս, սիրայօժար ընդունած է Հ.Բ.Ը.Միութեան գործունէութիւնը տարածել նաեւ Հայաստանի մէջ, ուր, ինչպէս յայտնի է, ժողովուրդը սովի եւ թշուառութեան մատնուած է:

Այդ առթիւ Կեդր. Ժողովը ձեռնարկած է բանակցութեանց, որոնց ելքին պիտի սպասէ գործի սկսելու եւ Միութեան վեհ նպատակները Հայաստանի մէջ գործադրելու համար:

Բայց այժմէն իսկ Կեդր. Ժողովը պարտք կը սեպէ վեր հանել թէ՛ ինք սոյն կարեւոր որոշումը տուած է հակառակ որ Միութեան ներկայ միջոցները թոյլ չեն տար նորանոր յանձնառութեանց, քանի որ արդէն, մասնատրապէս Կիլիկիոյ մէջ, զանազան հաստատութեանց բեռը ստանձնած է, սակայն եւ այնպէս այն հաւատքը ունի որ, ժողովուրդը այս որոշումին բացառիկ կարեւորութիւնը գնահատելով, իր կարգին պիտի փութայ իրեն զօրավիզ կանգնել»:

Իսկ 1923-ին Հայաստանի Լուսաւորութեան ժողովրդական կոմիսար Աս. Մռաւեան կը գրէ, Հայաստանի Կառավարութեան անունով, թէ «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան Ժողովը»:



դական Կոմիսարների Խորհուրդը արտօնում է Հայ (այդպես է բնագրում-էդ. Մ.) Բարեգործական Ընդհանուր Միութեանը Խորհրդային Հայաստանի սահմաններում իր հանրօգուտ գործունեությունը տարածել երկրի վերաշինության եւ ժողովրդի տնտեսական, ֆիզիքական ու կուլտուրական զարգացման օժանդակելու նպատակով»:

Այսպիսով, Հ.Բ.Ը.Մ.-ը կը դառնայ սփիւռքի միակ կազմակերպությունը, որ կը ստանայ իրաւունք գործելու Խ. Հայաստանի մէջ:

Միութիւնը Պօղոս Նուպար փաշայի գլխաւորութեամբ այդ տարիներուն մեծ գործ ունէր Կիլիկիոյ հայութեան, գաղթականութեան հասնելով՝ սնունդ, դեղօրայք, նպաստ, աշխատանք, կրթութիւն եւ այլն: Ահաւասիկ, այժմ իր սահմանափակ միջոցներով օգնութեան պիտի հասնէր նաեւ հայրենիքի մեր ժողովուրդին: Դժուար էր Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավարութեան համար որոշել, թէ ճիշդ էր որբերը արտասահմանէն Հայաստան դրկել, երբ քաղաքական պայմանները տարբեր էին հոն: Բայց եւ այնպէս նախընտրեցին որբերը տեղափոխել հայրենիք, քան թէ մնային Յունաստան, Պոլկարիա, Սուրիա եւ այլ ափեր:

Հեղինակը յաճախ արժեքաւոր փաստաթուղթեր կը ներկայացնէ, բան մը, որ ա՛լ աւելի հետաքրքրական ու իրաւ կը դարձնէ Միութեան գործունեությունը այդ ծանր տարիներուն: Մանրամասնութիւններու կը հանդիպինք 1924 Հոկտեմբեր 26-ի 15-20 տարեկան 250 որբերու Հայաստան տեղափոխումին մասին, Նոր Եղովկիս գիւղի կառուցումին մասին, Դարուիի Յակոբեան մայրանոցին մասին (բացումը 1929-ին, Արովեան փողոց, Երեւան, մինչեւ 1937 կրեց այդ անունը), Մարի Նուպար ակնաբուժարանին մասին (դարձեալ Արովեան փողոցի վրայ, 1929-1937 կրեց այդ անունը), Աւետ Մարգիս կատաղաբուժարանի մասին, 1930 (Երեւան եւ Ղարաքիլիսա), «Բարեգործական տուն» բնակելի շէնքին մասին (Երեւանի մէջ, մտաւորականներու համար, աւարտած 1936-ին), Մելգոնեան եղբայրներու ֆոնտին մասին (համալսարանին, հայկական ուսումնասիրութեանց համար, գիրքերու հրատարակութիւն, գրադարան, տպարան (ֆոնտին գործունեությունը նոյնպէս արգիլուեցաւ 1937ին), Նուպարաշէն աւանին մասին՝ գաղթականներուն համար: Եւ դժբախտաբար այս զանազան ծրագիրներն ու օժանդակութիւնները, որոնց մեծ մասը արդէն ընթացքի մէջ էր, ինչպէս նշեցինք՝ ստալինեան թաքը կասեցուց ամէն ինչ 1937-ին եւ շատ-շատ հայրենասէրներ գոհ գացին անտեղի ու անհմաստ բռնութիւններու: Սակայն, մինչ այդ, Հ.Բ.Ը.Մ.-ը անցած էր գործի, ու գործելով հանդերձ քննադատուած՝ ներսէն եւ դուրսէն:

«Սկսած 1924 թ., Միութիւնը Հայաստանում կառուցում էր հիւանդանոցներ, դպրոցներ, աւաններ, բնակելի շէնք, ձեռնամուխ էր եղել Նուպարաշէնի աննախադէպ շինարարութեանը, օժանդակում էր ներգաղթի աշխատանքներին եւ այս ամէնի հետ մէկտեղ, շարունա-

կում էր իր գործունեությունը տարբեր երկրներում: Հալէպում, Պէյրութում, Աթէնքում, Սալոնիկում, Երուսաղէմում, Գահիրէում եւ այլ քաղաքներում գործում էին նրա կողմից յատկապէս գաղթականների ու որբերի համար հիմնած բազմաթիւ որբանոցներ, պատասպարաններ, աշխատանոցներ, դարմանատներ ու այլ հաստատութիւններ: Վստահ կարելի է ասել, որ 20-30-ական թուերին Միութեան գործունեությունը սփիւռքում եւ Հայաստանում անօրինակ էր թէ իր ծաւալով եւ թէ իր կարեւորութեամբ: Եւ չնայած այդ ամէնին, նոյն այդ տարիներին, ինչպէս եւ նախորդ շրջանում, Միութիւնը մշտապէս քննադատում էր տարբեր շրջանակների կողմից: Երուսաղէմ Աղաթօնը 1932 թ. իր յօդուածներից մէկում գրում էր. «Փոխանակ ներողամիտ ոգիով խրախուսելու աշխատողները, փոխանակ ուժ տալու Բարեգործականին, վայել է անդադար հարուածել եւ սեղանել, ազգային ամէնէն անմեղ եւ օգտակար ծառայութիւնը անգամ անհանդուրժելի դարձնելու աստիճան: Շատ դժուար բան չէ հաստատութիւն մը քանդելը, չքանդուած հաստատութիւններէն ի՞նչ մնաց, բայց միթէ մենք հայերս քիւրտին եւ թուրքին պէս մէկ տարիէն շինուած տուն մը մէկ օրէն հիմնադատա՞կ ընելու ենք, ճիշդ ինչպէս կ'ընեն Պոլսոյ տուն փլցնող այլազգի գործաւորները... Դիւրի՞ն է արդեօք նոր եւ աւելի զօրաւոր ու օգտակար Բարեգործական մը շինելը, ու քանդել վերջ ո՞ր հայն է որ նոր Բարեգործականի մը դրամ պիտի տայ, տեսնել վերջ որ հայուն ձեռքովն է որ նախորդ Բարեգործականը քանդուած է: Կը հարցնեն ձեզ, դիւրի՞ն է կրկին գտնել Նուպարներ, Եագուպ փաշաներ, Մելգոնեաններ, Գարակէօզեաններ, Կիւլպէնկեաններ, Յակոբեաններ, Քէլէկեաններ, եւն.եւն.:

Քանդել առաջ, նախ կազմեցէք այսօրուան Բարեգործականէն աւելի պատկառելի եւ վստահելի Միութիւն մը, որպէս զի ձեր խօսքէն վերջ ձեր գործին մէջ տեսնենք ձեզ:

Կարեւոր բաժին մըն է «1920-30 թթ. ներգաղթը»: Անկարելի է ընթերցել էջ 65-117 եւ չհպարտանալ Միութեան վարքագիծով: Խորհրդային Միութիւնը ունէր յատկ իր քաղաքականությունը՝ համայնավարութիւն, կուսակցական մենատիրութիւն: Բնական է որ Հայաստան ունէր քաղաքական ու տնտեսական բազմակի հարցեր: Եթէ Գաշնակցութեան դէմ յստակ դիրքորոշում կար, եւ միւս կողմէ ալ խորհրդայնասէր ռամկավարներու ազատական գաղափարները կը քննադատուէին, Հ.Բ.Ը.Մ.-ը ըլլալով գուտ բարեգործական ու ոչ-քաղաքական կազմակերպութիւն մը սփիւռքի տարածքին, կոմունիստները դրած էր մեծ դժուարութեան մը դիմաց: Վստահաբար կարիքը ունէին նիւթական թէ այլ օժանդակութիւններու, սակայն Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավարութիւնը կը բաղկանար մեծահարուստ հայերէ, «պուրժուաներէ» եւ անոնք գիտակցօրէն շարունակեցին գործել յանուն հայրենասիրութեան եւ հայրենաշինութեան: Հ.Բ.Ը.Մ.-ը հոգաց ամէն տեսակի ծախսեր որբերը ապահով կերպով հասցնելու հայրենիք: Կազմակերպեց 1925-ի (4000 հոգի Յունաստանէն, Պոլսէն



եւ Միջագետքէն) ներգաղթը, օգնութեան հասարակ 1926-ի Շիրակի երկրաշարժէն տուժած ժողովուրդին, 1927-ին 1600 հոգի ներգաղթեցին Յունաստանէն ու Պոլիսէն, 1931-32 թուականներուն հինգ հանգրուաններով շուրջ 8000 հոգի ներգաղթեց Հայաստան: Օգնութիւնները շարունակուեցան նաեւ հոն՝ բնակարանաշինութիւն, գիւղեր, արհեստանոցներ:

Գժուարութիւնները շատ-շատ էին: Մէկ կողմէ իշխանութիւններուն մեղքով՝ քաշքշուքներ, անհարկի ուշացումներ, դրամի մսխում, այլ կամ անձնական նպատակներու օգտագործում: Իսկ միւս կողմէն՝ ներգաղթողներուն դժուարութիւնները՝ յարմարիւ ճոր պայմաններուն, անոր բոլոր մանրամասնութիւններով՝ քաղաքական, տնտեսական, բարոյահոգեբանական...: 1936-ին 1800 հոգի ներգաղթեց Ֆրանսայէն, իրենց հետ տանելով Կոմիտաս վարդապետի աճիւնը:

Հ.Բ.Ը.Մ.-ի երկրորդ նախագահ Գալուստ Կիւլպէնկեանի համեմատաբար կարճ շրջանը (1930-32) եղաւ ակելոծ: Մարդ, որ միջագաւառ գետնի վրայ յաջողակ մըն էր, նոյն խանդավառութեամբ օժանդակեց հայութեան Միութեան միջոցով: Սակայն, Խորհրդային մութ տարիները մօտեցած էին: Սփիւռքահայուն օգնութիւնը իր հայրենիքին կը դիտուէր չար աչքով, որպէս դաւադրական քայլ կոմունիստական վարչակարգին: Կը դիտուէր որպէս ազգայնական շարժում, որպէս այսպէս ըսած «դաշնակցական-ռամկավարական դաշինքի» արդիւնք, իբր նպատակ ունենալով Հայաստանը դուրս բերել Խ. Միութենէն, դարձնելով անկախ պետութիւն: Որքան այդ օրերուն սին էին նման կարծիքներ, նոյնքան մեծ վնաս հասցուցին համայն հայութեան եւ Գալուստ Կիւլպէնկեանի նման անձնատրութիւն մը յարմար գտաւ հրաժարիլ Միութենէն, իր անձին հասցուած զառանցանքներուն ի տես, որոնք կու գային Խ. Հայաստանի ղեկավարութենէն՝ Ա. Խանճեանէն: Սուտի, կեղծիքի, ինքնախաբէութեան վրայ հիմնուած պետութիւն մը, որ 1937-ին ոչ միայն դադրեցնել տուաւ Հ.Բ.Ը.Մ.-ի գործունէութիւնը Հայաստանի մէջ, այլ շատ ու շատ նուիրելներու կարգին գնդակահարեց Հ.Բ.Ը.Մ.-ի ներկայացուցիչը Երեւանի մէջ՝ Հայկազ Գարակէօզեանը, որպէս գործակալ, լրտես եւրոպական պետութիւններու: Ահաասիկ «զնահատականը» Բարեգործականի հազարամէկ օժանդակութիւններուն դիմաց: Խորհրդային Միութեան ղեկավար Եոսիֆ Ստալին «յիմարութիւն» կոչելով «պուրժուա» սփիւռքահայերուն օժանդակութիւնը կոմունիստ երկրին, «աւելի մեծ յիմարութիւն» կատարեց չընդունելով ու կասեցնելով այդ նպատակները:

Գիրքին երրորդ բաժինը, էջ 120-էն սկսեալ կը ներկայացնէ «Հ.Բ.Ը.Մ.-ը Հայաստանի ներքաղաքական պայքարում»: 1935-էն սկսեալ ներքաղաքական, ներկուսակցական պայքարը կը ջլատէ Խ. Հայաստանի արդէն իսկ տկար ուժը, կը ձգձգուի Նուպարաշէն աւանի ծրագիրը, ուր պիտի բնակէին ու ապաստան գտնէին ներգաղթողներ: Մելքոնեան կը բերէ բազմաթիւ

փաստարկներ, կը խորանայ այդ տարիներու կոմունիստական կուսակցութեան գործունէութեան ձեւին, սուտ ամբաստանութիւններու, բանտարկութիւններու եւ սպանութիւններու: Մէկ կողմէ Ստալին, միւս կողմէ Բերիա տարօրինակ, անտրամաբանական որոշումներ կ'ընդունին: Եւ այս մաքրագործումին մէջ Հ.Բ.Ը.Մ.-ի ղեկավարները, եւ մանաւանդ վարիչ-տնօրէն Վահան Մալեգեանի պաշտօնական նամակներուն ծանօթացումով, կը տեսնենք թէ Բարեգործականը որքա՞ն հեռու եղած է քաղաքական խաղերէ, բայց միաժամանակ զոհը դարձած է այդ խաղաւանքներուն:

Թէեւ հակիրճ եւ մակերեսային անդրադարձ մը եղաւ այս գրութիւնը, այդ շատ կարեւոր տարիներուն մասին, սակայն հարկ է տեղ տալ այն որոշումին, ուր «կ'ամբաստանուի» Հ.Բ.Ը.Մ.-ի Երեւանի ներկայացուցիչ Հայկազ Գարակէօզեանը:

Գատավճիռ, 18 Յուլիսի 1938 թ.

«Նախնական եւ դատական հետաքննութեամբ հաստատուած է, որ Գարակէօզեանը 1928 թ.-ից արտասահմանեան հակայեղափոխական դաշնակցական-ռամկավարական կենտրոնի ներկայացուցիչն էր Հայաստանում եւ իրականացնում էր կապը հակայեղափոխական ազգայնական տեռորիստական կազմակերպութեան հետ միասնաբար, որի նպատակն էր՝ Խորհրդային իշխանութեան զինուած տապալումը, Հայաստանի անջատումը Խ.Ս.Հ.Մ.-ից եւ այսպէս կոչուած «անկախ» հայկական պետութեան ստեղծումը՝ կապիտալիստական մի երկրի պրոտեկտորատի տակ:

Բացի այդ, Գարակէօզեանը զբաղուել է լրտեսական գործունէութեամբ յօգուտ արտասահմանեան հետախուզութիւններից մէկի, վերջինիս փոխանցել է զաղտնի տեղեկութիւններ, որոնք իրենցից Խորհրդային Միութեան պետական զաղտնիք էին ներկայացնում:

Այսպիսով ապացուցուած է Գարակէօզեանի մեղաւորութիւնը Հ.Խ.Ս.Հ. Բ.Օ. (քրեական օրէնագրքի - Հ.Ս.) 59, 63, 65, 68 յօդուածներով նախատեսուած յանցագործութիւնների կատարման մէջ:

Դեկավարուելով Հ.Խ.Ս.Հ. Բ.Գ.Օ.-ի 297 եւ 298 յօդուածներով Խ.Ս.Հ.Մ. Գերագոյն Դատարանի Ձիւնուորական կոլեգիան դատապարտեց Հայկազ Իզնատիոսի Գարակէօզեանին պատժի առաւելագոյն չափի՝ գնդակահարութեան, անձամբ իրեն պատկանող ողջ գոյքի բռնագրաւումով»:

Նոյն օրը՝ 18 Յուլիս 1938-ին ան գնդակահարուեցաւ եւ միայն 7 Մարտ 1956-ին Խ. Միութիւնը վերատեսութեան ենթարկելով դատավճիռը յայտարարեց. «... Հայկազ Գարակէօզեանը 1937 թ. ձերբակալուել եւ դատապարտուել է անհիմն կերպով»:

Վերջաբանին մէջ, Մելքոնեան կը նշէ, որ Բ. Համաշխարհային պատերազմի տարիներուն եւ անկէ ետք



նոյն Հ.Բ.Ը.Մ.-ն էր որ ֆինանսատրեց նոր ներգաղթը սփիւռքի մէջ: Միայն 1988-ի երկրաշարժէն եւ Խ. Միութեան փլուզումէն ետք Բարեգործականը գործնապէս վերադարձաւ Հայաստան: 1990-ին բացուեցաւ անոր գրասենեակը Երեւանի մէջ եւ մինչեւ այսօր կ'օժանդակէ երկրին զարգացումին նպաստող ծրագիրներու:

Էդուարդ Մելքոնեանի աշխատանքը հարկ է մեծապէս գնահատել: Այնպիսի մանրամասնութիւններու դիմաց կը գտնուի ընթերցողը, որոնք միայն լոյս կը սփռեն խաւարի այդ տարիներուն վրայ: Նոյնիսկ Բարե-

գործականի անդամներս, այսօր հեռու ենք մեր Մեծ Միութեան անցեալի շատ կարեւոր այդ հանգրուանի մանրամասնութիւններէն: Մեծ բաց կը գոցէ այս հրատարակութիւնը, որուն շնորհիւ հանրութեան կողմէ Հ.Բ.Ը.Մ.-ի փառապանծ պատմութիւնը ուսումնասիրելու առիթ մը կ'ընձեռուի վաւերագրական անյայտ մնացած նիւթերով:

ՀՐԱՉ ՄԵՓԵԹՃԵԱՆ

Խօսնակ

## **ՏՈՔԹ. ՄՈՂԱՄԷՏ ՌԷՖԱՄՆԱԾ ԷԼ ԻՄԱՍԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ, 1878-1923» ԳԻՐՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ**

Գահիրէի Հ.Գ.Միութիւնը 20 Յունիս 2002ին, Հայ Տանիքին վրայ հրաւիրած էր Տոքթ. Մոհամէտ Ռէֆաւաթ Էլ Իմամը, ներկայացնելու իր հեղինակութիւնը եղող «Հայկական Դատը Օսմանեան Պետութեան Մէջ, 1878-1923» աշխատասիրութիւնը:

Ինչպէս «Տեղեկատու»ի նախորդ թիւով յիշուած էր, գիրքը հրատարակուած է վերջերս, Հ.Բ.Ը.Միութեան «Մաթենիկ Չագըր» հիմնադրամին կողմէ: Հեղինակը զայն ձօնած է Պաղեստինի ժողովուրդին, «Որ կ'սպրի կրկնուող ողբերգութիւն մը»:

Հ.Գ.Միութեան աւտենապետ՝ Պր. Գրիգոր Մարգարեան, հակիրճ բացման խօսքէ մը ետք, հրաւիրեց գիրքին հեղինակը, իր աշխատասիրութիւնը ներկայացնելու:

Երեկոն վարեց եգիպտական համալսարաններու դասախօս, արդարութեան միջազգային դատարանի մասնագէտ՝ Տոքթ. Բիատ Ֆաթի Ալլա Պասալա:

Մոհամէտ Ռէֆաւաթ մօտ 100-ի հասնող հայ թէ եգիպտացի ներկաներուն հաղորդակից դարձուց գիրքին գլխատր երեք բաժիններուն բովանդակութեան՝ «Համիտեաններն ու հայերը, 1878-1909», «Իթթիհատականներն ու հայերը, 1909-1918», եւ «Զեմալականներն ու հայերը, 1919-1923»: Դասախօսին ելոյթը տեղոյն վրայ պարբերաբար եւ համառօտ հայերէնի թարգմանեց Տոքթ. Ճորճ Սիմոնեան:

Ներկայ էին եգիպտահայոց բարեխնամ Առաջնորդ Տ. Չաւէն Արք. Չինչինեան, Հ.Հ. Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Տոքթ. Սէրգէյ Մանասարեան, հայ համայնքէն հանգամանաւոր անձեր, մեծ թիւով

եգիպտացի պատմաբաններ, գրողներ, լրագրողներ եւ օրուան նիւթով հետաքրքրուած ազգայիններ, որոնք դասախօսութեան աւարտին հարցումներ ուղղեցին եւ դրական արտայայտութիւններ ունեցան ներկայացուած աշխատասիրութեան մասին:

Տոքթ. Ռէֆաւաթ իրեն ուղղուած հարցումներուն տուած կարճ, սպառիչ եւ անկողմնակալ պատասխաններով գոհացուց բոլոր ներկաները:

Դասախօսին ելոյթէն յետոյ տեղի ունեցած ճիշտ պատուասիրութիւնը առիթ տուաւ շարունակելու երեկոն, օրուան նիւթին վերաբերող խօսակցութիւններով, մինչեւ առաւօտեան առաջին ժամերը:

Հոս կ'արժէ յիշել, թէ Տոքթ. Մոհամէտ Ռէֆաւաթ Էլ Իմամ Տամանհուրի համալսարանի գրականութեան ամպիոնին մէջ, երրորդ լսարանի ուսանողներուն կը դասաւանդէ Երոպայի ժամանակակից պատմութիւնը:

Այդ բերումով, դասախօսը յիշեալ ամպիոնի ղեկավարութեան հաւանութեամբ, իր 450 ուսանողներուն անվճար կերպով բաժնած է իր հեղինակութիւնը եղող այս գիրքէն 450 օրինակ եւ զայն նշանակած է որպէս «օժանդակ գիրք»:

Այս դրութեամբ, ամավերջին՝ պատմութեան քննութեան նիշերուն 20 տոկոսը վերապահուած է սոյն գիրքին բովանդակութեան վերաբերեալ հարցումներուն:

Ուրախ ենք տեղեկացնելու, թէ քննութիւնները աւարտած են եւ ուսանողները յաջող կերպով պատասխանած են հայկական դատին վերաբերեալ հարցումներուն:



## ՀԲԸՄ-Ի ԵՐՐՈՊԱՅԻ 11ՐԴ ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ 17-20 ՄԱՅԻՍ 2002 ՍՈՖԻԱ (ՊՈԼԿԱՐԻԱ)

ՀԲԸՄ-ի Երրուպայի մարզական խաղերը այս տարի առաջին անգամ ըլլալով կայացան Սոֆիայի մէջ (Պուլկարիա) որուն իրենց մասնակցութիւնը բերին Երրուպայի զանազան կողմերէն եկած երկու հարիւր երիտասարդ հայորդիներ:

Տարիներէ ի վեր ՀԲԸՄ-ի Երրուպայի մարզական խաղերը տեղի կ'ունենային Ֆրանսայի տարբեր քաղաքներու եւ Պելճիքայի (Անվերս) մէջ:

Այս անգամ Ֆրանսայի ՀԲԸՄ-ի Մշակութային եւ Մարզական լիագոր՝ Տիկին Հերմինէ Էնֆիսիօ-Տիզեանի առաջարկով, ՀԲԸՄ-ի Երրուպայի 11րդ մարզական խաղերը տեղի ունեցան Պուլկարիոյ մայրաքաղաք Սոֆիայի մէջ:

Մրցումները սկսան Շաբաթ 18 Մայիսի առաւօտեան: Բացման տպաւորիչ արարողութիւնը տեղի ունեցաւ նոյն օրը կէսօրէ վերջ մարզական խաղերու քայլերգով «Հայ Ապրիմը», որուն խօսքերը եւ երաժշտութիւնը յատկապէս պատրաստուած էին Սոֆիայի մասնաճիւղին կողմէ, ՀԲԸՄ-ի Երրուպայի 11րդ խաղերուն համար:

Հանդիսատի տողանցքին մասնակից 200 մարզիկները կը դիմաւորուէին որոտընդոստ ծափահարութիւններով:

Յաջորդաբար, տողանցքին Եգիպտոսի (Գահիրէ), Աւստրիոյ (Վիեննա), Անգլիոյ (Լոնտոն), Ֆրանսայի (Փարիզ, Լիոն, Մարսէյ), Հայաստանի եւ Պուլկարիոյ խումբերը:

Պաշտօնական տողանցքէն զատ տեղի ունեցան հայկական եւ պուլկարական ժողովրդական երգերու եւ պարերու ելոյթներ:

Բացման եւ փակման հանդիսութիւններուն ներկայ էին Պուլկարիոյ եւ Ռումանիոյ առաջնորդ՝ Գերշ. Տիրայր Արք. Մարտիկեան, Պուլկարիոյ երիտասարդութեան եւ մարզական նախարար Վասիլ Իվանով, պետական երեսփոխան եւ ՀԲԸՄ-ի Սոֆիայի մասնաճիւղի վարչութեան անդամ Տոքթ. Ռուբէն Գրիգորեան, խորհրդարանի քարտուղար ու ՀԲԸՄ-ի Սոֆիայի մասնաճիւղի վարչութեան անդամ Կատար Խաչիկեան, Պուլկարիոյ Պատմիւթոնի

Ֆետերասիոնի նախագահ Բիւզանդ Գասապեան եւ հայկական ծագումով բազմաթիւ ողիմպիական ախոյեաններ:

Շաբաթ գիշեր տեղի ունեցաւ ճաշկերոյթ պարահանդէս մը Մոսկուա Պանդոկի ընդունելութիւններու սրահին մէջ, որ մեծ խանդավառութեան մէջ տեւեց մինչեւ առաւօտեան երկուրը:

Կիրակի օր տեղի ունեցան ամառական մրցումները: Օրուան վերջաւորութեան տեղի ունեցան բաժակներու յանձնումը եւ փակման հանդիսութիւնը: Կազմակերպիչները իւրաքանչիւր մասնակցող մարզիկի յանձնեցին զանազան նուէրներ:

Այս, բոլոր հանդիսականները հաւաքուեցան պարասրահի մը մէջ, ուր մարզական խաղերուն ներկայ երիտասարդները տօնեցին այս առիթը եւ զուարճացան ամբողջ գիշերը:

ՀԲԸՄ-ի Երրուպայի 11րդ մարզական խաղերուն մասնակցող տղաքը եւ աղջիկները ապրեցան յուզումնալի պահեր ու առիթը ունեցան նոր բարեկամութիւններ մշակելու:

ՀԲԸՄ-ի Սոֆիայի մասնաճիւղի կազմակերպիչները ամէն ինչ կազմակերպած էին կատարեալ բժախնողութեամբ, խաղերը, ձեռնակները, ճաշերը եւ ամէն ինչ, այսպիսով հաստատելով բարձր չափանիշ մը, ինչ որ շատ պիտի դժուարացնէ խաղերը աւելի լաւ կազմակերպելու յաջորդ կազմակերպիչներուն գործը:

Մասնաւոր շնորհակալութիւններ խաղերու կազմակերպիչներուն, յատկապէս ՀԲԸՄ-ի Սոֆիայի խումբին գլխատրութեամբ Տիկին Սոնիա Աւագեան-Պետրոսեանի, իրենց ջերմ ընդունելութեան, կատարեալ կազմակերպութեան եւ ՀԲԸՄ-ի երիտասարդներով շրջապատուած՝ անմոռանալի շաբաթավերջ մը անցնելու իրենց տուած առիթին համար:

Բացականները իսկապէս կորսնցուցին:  
(յապաւումներով) Մամուլ Նաճարեան  
Լա Լէթր տը Ի՛իկապ

## ՀԵԼԻՈՊՈԼՍՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-Ի ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՍՈՖԻԱՅԻ ՄԵՋ ԿԱՅԱՑԱԾ ՀԲԸՄ-Ի ԵՐՐՈՊԱՅԻ 11ՐԴ ԽԱՂԵՐՈՒՆ

Հաւանաբար ընթերցողներուն մտքին մէջ հարց ծագի, թէ ի՞նչպէս Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի խումբը, որ եգիպտահայ խումբ մըն է, կը մասնակցի ՀԲԸՄ-ի Երրուպայական խաղերուն:

ՀԲԸՄ-ի Երրուպայական խաղերուն կազմակերպիչները,

տարիներէ ի վեր գեղեցիկ աւանդութիւն մը ստեղծած են, իրենց կազմակերպած տարեկան մրցումներուն, Երրուպայէն դուրս ՀԲԸՄ-ի խումբ մը հրաւիրելով:

Այս տարի, ընտրութիւնը վիճակուած էր Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ին, որուն ինը անդամներէ բաղկացած





մարզական պատուիրակությունը ղեկավար ունենալով ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի ոտնագնդակի ժրաջան պատասխանատու՝ Պերճ Աւետիսեանը, Հինգշաբթի 16 Մայիս 2002-ին մեկնեցաւ Սոֆիա:

Այս պատուիրակությունը մասնակցեցաւ երեք մարզաձեւերու՝ ոտնագնդակ, պասքէթ պոլ եւ փինկ փոնկ ու հակառակ իր փոքր թիւին յաջողեցաւ ձեռք բերել փայլուն արդիւնքներ, Գահիրէ վերադառնալով չորս բաժակներով:

Խումբին անդամներն էին, բացի ղեկավարէն, Կարօ Վարժապետեան, Կարէն Թուլումպաճեան, Արմէն Պալթայեան, Ռուբէն Սիմոնեան, Ռիզթօ Պօղոսեան, Արմէն Վարժապետեան, Յակոբ Յակոբեան եւ Քրիսթիան Պուսպճեան:

Խումբը շաբաթ 18 Մայիսին սկսաւ իր յաղթական երթին, առաջին առթիւ խաղալով Մարսիլիայի դէմ պասքէթ պոլի մրցում մը, որուն արդիւնքը եղաւ 46-31 ի նպաստ Գահիրէի:

Այս մրցումին անմիջապէս յաջորդեց ոտնագնդակի մրցում մը Սոֆիայի խումբին դէմ որուն արդիւնքը եղաւ 1/0, դարձեալ ի նպաստ Գահիրէի:

Կէս ժամուան կարճ դադարէ մը յետոյ, խումբը խաղաց ոտնագնդակի երկրորդ մրցում մը Վիեննայի դէմ, որուն արդիւնքն էր 6/0, ի նպաստ Գահիրէի:

Եւ վերջապէս խումբը խաղաց պասքէթ պոլի երկրորդ մրցում մը, դարձեալ Վիեննայի դէմ, որուն ելքը եւս եղաւ ի նպաստ Գահիրէի 57-42 արդիւնքով:

Կէսօրուան ճաշէն եւ փոքր հանգիստէ մը յետոյ, խումբը խաղաց նոյն օրուան հինգերորդ մրցումը, ոտնագնդակի մրցում մը Մարսիլիայի դէմ, որ վերջացաւ Գահիրէի յաղթանակով 1/0 արդիւնքով:

Այս մրցումներուն զուգահեռ Ռուբէն Սիմոնեան փինկ փոնկի մրցումներ կը խաղար առանց որեւէ պարտութեան շահելով բոլոր մրցումները, ինչ որ Գահիրէի խումբին համբար տարածեց:

Վերոյիշեալ մրցումներէն յետոյ, խումբը մասնակցեցաւ պաշտօնական տողանցքին եւ բացման հանդիսութեան: Ապա, տեղի ունեցաւ ճաշկերոյթ-պարահանդէս, որուն ընթացքին եգիպտահայ խումբը արծաթեայ ափսէ մը նուիրեց հիւրընկալ ակումբի ատենապետուհի՝ Տիկին Սոնիա Աւագեան-Պետրոսեանի որպէս յիշատակի նուէր:

Կիրակի 19 Մայիսին, մրցումներու երկրորդ օրն էր: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի տղաքը դաշտ իջան յաջող արդիւնքներ իրականացնելու վճռակամութեամբ:

Օրը սկսաւ Պուլկարիոյ դէմ ոտնագնդակի երկրորդ հանգրուանի մրցումով, քանի որ նախորդ օրուան արդիւնքներով ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի մարզիկները նուաճած էին իրենց խմբաւորումին առաջնութիւնը:

Այս մրցումին արդիւնքն ալ եղաւ ի նպաստ Գահիրէի, 1/0 արդիւնքով:

Ոտնագնդակի մրցումին յաջորդեց պասքէթ պոլի մրցում մը, ներկայ խումբերէն զօրաւորագոյնին՝ Հայաստանի խումբին դէմ, որուն անդամները իրենց բարձր հասակով եւ ազգային խումբէն խաղացող երկու մարզիկներով, դժուար մրցում մը պարտադրեցին: Այս մրցումին արդիւնքը եղաւ 57/70 ի նպաստ Հայաստանի:

Սոյն մրցումէն յետոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի տղաքը դաշտ իջան խաղալու ոտնագնդակի երկրորդ հանգրուանի երկրորդ մրցումը: Սակայն, մրցորդ խումբը քաշուելով Գահիրէն յաղթական նկատուեցաւ 3/0 արդիւնքով:

Ատկէ յետոյ, խումբը Պուլկարիոյ դէմ խաղաց պասքէթ պոլի զտումներու վերջին մրցումը, որուն մէջ Գահիրէն դարձեալ յաղթական ելաւ 43/48 արդիւնքով:

Ոտնագնդակի շխաղացում մրցումին յատկացում ժամանակը, խումբը օգտագործեց ներկայ գտնուելով տղոց փինկ փոնկի աւարտական մրցումին, որուն Ռուբէն Սիմոնեան մասնակցեցաւ վարպետութեամբ եւ գովելի մակարդակով: Իր տարած յաղթանակը աւելցուց խումբին միւս անդամներուն վճռակամութիւնը, ոտնագնդակի աւարտական մրցումը շահելու:

Եւ իսկապէս, բոլոր մեր տղաքը դարձեալ ուղղուեցան ոտնագնդակի դաշտը եւ Մարսիլիայի հետ զօրաւոր մրցումէ մը յետոյ կրցան մրցաշարքի ախոյեանի դիրքը նուաճել 2/1 արդիւնքով:

Չմոռնանք աւելցնելու, թէ Ռուբէն Սիմոնեան փինկ փոնկի զոյգերու մրցաշարքին եւս մասնակցելով յաջողեցաւ երկրորդ դիրքը գրաւել եւ արժանանալ մետալի:

Այսպիսով ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի խումբը ունեցաւ հետեւեալ արդիւնքները

- Ոտնագնդակ Ա դիրքի բաժակ
- Պասքէթ Պոլ Բ դիրքի բաժակ
- Փինկ Փոնկ (անհատական) Ա դիրքի բաժակ
- Փինկ Փոնկ (զոյգեր) Բ դիրքի մետալ

Վերոյիշեալ երեք բաժակներէն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի խումբը, յատուկ ժիւրիի մը որոշումով արժանացաւ առանձին բաժակի մը «Արդար Խաղարկութեան» (Fair Play) համար:

Այսպիսով Գահիրէի խումբը կը հանդիսանար առաւելագոյն բաժակներ եւ մետալներ ստացող խումբը եւ ամէնէն կարեւորը՝ կը գնահատուէր որպէս օրինակելի խումբ:

Կը շնորհաւորենք մեր տղաքը, իրենց ղեկավար Պերճ Աւետիսեանը, Հելիոպոլսոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի վարչութիւնը իր այս պատուաբեր նախաձեռնութեան համար եւ Գահիրէի ՀԲԸՄ-ի վարչութիւնը, որ միշտ զօրավիգ կը կանգնի երիտասարդական ձեռնարկներու:

Մարզական Թղթակից



## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՅԱՂԹԱԿԱՆ ՄԱՐՁԻԿՆԵՐՈՒՆ

Հելիոպոլսյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի վարչությունը գեղեցիկ գաղափարը ունեցած էր Երեքշաբթի 4 Յունիսի երեկոյեան հրաիերելու Գահիրեի ՀԲԸՄ-ի վարչութեան անդամները, որպէսզի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի վարչութեան կազմին եւ բոլոր մարզիկ մարզիկուհիներու հետ միասնաբար եւ արդար հպարտութեամբ տօնախմբեն այն բացառիկ յաղթանակը զոր ձեռք բերած է ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի 9 հոգինոց մարզական պատուիրակութիւնը, ՀԲԸՄ-ի Երոպայի 11րդ մարզական խաղերուն, որ կայացաւ Սոֆիայի մէջ, մասնակցելով ոտնագնդակի, պասքէթ պոլի եւ փինկ փոնկի մարզախաղերուն ու արժանանալով 4 բաժակի:

Երեկոյթին բացումը կատարեց Հելիոպոլսյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի վարչական անդամներէն Տոքթ. Ճորճ Սիմոնեան: Ան շնորհակալութիւն յայտնեց ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի եւ ՀԲԸՄիութեան պատասխանատու մարմիններուն, մարզական պատուիրակութեան ընձեռուած օժանդակութեան համար, ջատագովեց մարզիկներուն ձեռք բերած յաջողութիւնները եւ մարզական բարձր ոգին ու շնորհատրեց զանոնք:



Ապա, ան խօսք առնելու հրաիերեց խումբին պատասխանատու Պր. Պերճ Աւետիսեանը, որ մանրամասն տեղեկութիւններ տուաւ խումբին Սոֆիայի մէջ անցուցած օրերուն եւ ունեցած մրցումներուն մասին:

Իր կարգին խօսք առնելու հրաիերուած՝ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պր. Պ. Թէրզեան շնորհատրեց ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի վարչութիւնը, մարզիկներն ու հրաիերեալները, այս պատուաբեր յաջողութեան համար, շեշտելով թէ Երոպայի խաղերուն կազմակերպիչներուն կողմէ իրեն հասած տեղեկութիւններուն համաձայն՝ մեր մարզիկները ունեցած են խմբային օրինակելի խաղարկութիւն եւ պահուածք, որ զիրենք արժանացուցած է «Արդար խաղարկութեան» բաժակին եւ մեզ՝ արդարօրէն հպարտանալու իրաւունքին:

Երեկոյթը շարունակուեցաւ շէնշող մթնոլորտի մէջ, որուն աւարտէն առաջ, մարզիկներն ու պատասխանատուները միասնաբար կտրեցին «Յաղթանակ»ի կարկանդակը:

*ՀԲԸՄ-ի Երոպայի Նաւասարդեան 11-րդ մարզական խաղերուն ՀՄԸՄ-ՆՈՒՊԱՐի մարզական պատուիրակութիւնը «յաղթանակ»ի կարկանդակին առաջ:*

*Ձախէն աջ՝ Ռուբէն Սիմոնեան, Արմէն Պալթայեան, Կարօ Վարժապետեան, Կարէն Թուլումպաճեան, պատասխանատու՝ Պերճ Աւետիսեան, Արմէն Վարժապետեան, Զրիսթեան Պուլպաճեան եւ Ռիզօ Պօղոսեան: Կը բացակայի՝ Յակոբ Յակոբեան*

## ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՔԷՐՍԷՍ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ սկաւուտական եւ կայտական շարժումները, Կիրակի 30 Յունիս 2002-ին, երեկոյեան ժամը 7-էն սկսեալ, Միութեան զարդարուած եւ լուսատրուած մարզադաշտին վրայ կազմակերպած էին իրենց տարեկան քերմէս-դաշտահանդէսը:

Սկաւուտները եւ կայտերը ճիշտին խնայած որ այս տարուան քերմէսը նախորդ տարիներէն աւելի յաջող եւ ճոխ ըլլայ: Այս տարի նկատելի էր, քերմէսական նոր խաղերու յաւելումը, նախորդ տարիներու խաղերուն վրայ:

Երեք թէ երիտասարդ, խանդավառօրէն կը մասնակցէին զանազան խաղերու: Բոլորին մէջ կը նշմարուէր ու տրամադրութիւն:

Տեղի ունեցաւ սկաւուտներուն եւ կայտերուն կողմէ պատրաստուած լահմաճուճի եւ քաղցրաւենիներու անթերի սպասարկութիւն:

Քերմէսին ներկայ էին Աղեքսանդրիոյ հո-տոր հովի Արծ. Տէր Գրի որ Քինյ. Մուրատեան եւ երիցուհին, ինչպէս նաեւ Աղեքսանդրիոյ ազ-ային իշխանութեան, մշակութային միութիւններու, ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պատասխանատուներ ու նախկին սկաւուտներ եւ կայտեր:

Տեղի ունեցաւ վիճակահանութիւն եւ բախտատրները շահեցան՝ եղեցիկ եւ արժէքատր նուէրներ: Երեկոն շարունակուեցաւ ընտանեկան հաճելի մթնոլորտի մէջ, մինչեւ ուշ իշեր:

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ սկաւուտները եւ կայտերը ինչպէս նաեւ խմբապետական կազմը կը շնորհատրենք, իրենց կազմակերպած այս յաջող քերմէս-դաշտահանդէսին համար:

Թղթակից

# ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության («Միութիւն») Կեդրոնական Վարչական Ժողովը այսու կը ծանուցանէ Միութեան բոլոր իրաւասու անդամներուն, թէ Միութեան 82-րդ Ընդհանուր Ժողովը պիտի գումարուի Շաբաթ, 26 Հոկտեմբեր 2002, առաւօտեան ժամը 9.30-ին, The University Club, 1 West 54րդ փողոց, Նիւ Եորք, ՆԵ, ԱՄՆ:

Սոյնը 82-րդ Ընդհանուր Ժողովին գումարման մասին տրուող միակ ծանուցագիրն է: Հետեւաբար, Միութեան իրաւասու անդամներէն կը խնդրենք, որ անձնապէս ներկայ գտնուին ժողովին, վերոյիշեալ թուականին եւ վայրը, եւ կամ ամենէն ուշը մինչեւ 15 Հոկտեմբեր 2002 իրենց փոխանորդագրերը - Հիմնական Կանոնագրի տրամադրութեանց համաձայն գործադրուած եւ վաւերացուած - յանձնեն Կեդրոնական Վարչական Ժողովի ատենադպիրին, հետեւեալ հասցեով

ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION  
CENTRAL BOARD OF DIRECTORS  
55 East 59th Street  
New York, N.Y. 10022, U.S.A.

## ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳ

- 1- Ներկայացում եւ վաւերացում 2000 եւ 2001 տարեշրջաններու Միութեան ընդհանուր բարոյական տեղեկագրին:
- 2- Ներկայացում եւ վաւերացում 2000 եւ 2001 տարեշրջաններու Միութեան ընդհանուր նիւթական տեղեկագրին:
- 3- Ընտրութիւն Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի անդամներուն:
- 4- Ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի անդամի մը:
- 5- Նկատառում եւ գործադրում վերոնշեալներուն հետ առընչուող որեւէ հարցի, ինչպէս նաեւ ժողովին ուշադրութեան բերուող եւ անոր աշխատանքներու ընթացքին ըստ պատշաճի արծարծուող հարցերու:
- 6- Քննարկում Ընդհանուր Ժողովի առաջարկներու եւ բանաձեւերու:

Ի Դիմաց

ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ԺՈՋԷՖ ՊԱՍՐԱԼԵԱՆ

ՊԵՐՃ ՍԵՂՐԱԿԵԱՆ

Ատենադպիր

Ատենապետ

Յուլիս 19, 2002

